ՀՏԴ-726.5.04 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՕՁՈՒՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՆԱԽԱՏԻՊԵՐԸ

Արման Ժիրայրի Թորոսյան
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
«Երևաննախագիծ» ՓԲԸ, Երևան, ՀՀ
arman.m.torosyan@gmail.com

Քննարկվում են Օձունի Ս Աստվածածին եկեղեցու ձևաստեղծման հիմքերը: Վերլուծվում են դրա նախատիպ հանդիսացող 4-րդից 6-րդ դարերի վեց եկեղեցիներ. Գտեվանք, Զգրաշեն, Տորմակ, Կուրթան, Արուճ և Եղվարդ, որոնց հորինվածքային, կառուցվածքային և գեղարվեստական լուծումները կարևոր են եղել հայկական եկեղեցիների ձևաստեղծման համար: Դրանցից յուրաքանչյուրում առկա են որոշակի կառուցվածքային տարրեր, որոնք փոխանցվել են հաջորդ դարեր՝ պահպանելով կառուցվածքի էությունը, երբեմն կրելով ձևի որոշ փոփոխություն:

Առանցքային բառեր. *ավանդատուն, արտաքին բաց խորան, արտաքին ճեմասրահ, կիսաշրջան խորան, գմբեթ, սյունաշար*

Ներածություն

Օձունի Ս Աստվածածին եկեղեցին գտնվում է Լոռու մարզի Օձուն գյուղի կենտրոնական բարձրադիր մասում: Եկեղեցին անվանվել է՝ Ս Աստվածածին, Ս Նշան, Ս Հովհաննես, Խաչգոնդ, Խաչգունդ: Վերջին անվանումը կապված է եկեղեցու բակում թաղված Խաչգունդ քահանայի անվան հետ, որի հիշատակին 1291թ. կանգնեցրել են արձանագրությամբ քանդակազարդ խաչքար: Եկեղեցու հատակագծային և ծավալատարածական հորինվածքի և գեղարվեստական արտահայտչականության միջոցների առանձնահատկությունները ցուցում են կառույցի 5-6-րդ դդ. գմբեթավոր բազիլիկ տիպին պատկանելությունը: Եկեղեցու հյուսիս-արևմտյան մասում կանգնեցված է վաղ քրիստոնեական շրջանի կոթող, որը Հայաստանում քրիստոնեության հաղթանակը նշանավորող հոյակապ հուշարձան է:

Գմբեթավոր բազիլիկ եկեղեցին արևելքից արևմուտք ձգված ուղղանկյուն հատակագծով կառույց է (20,71×31,62 *մ* արտաքին չափերով)՝ կիսաշրջանաձև խորանին կից երկհարկ ավանդատներով, արտաքին կամարաշար սրահով: Աղոթասրահն ուղղանկյուն դահլիճ է՝ երկշար մույթերով բաժանված երեք նավերի: Արտաքին սրահը երեք կողմերից (հյուսիսային, արևմտյան և արևելյան) եզերում է աղոթասրահը: Եկեղեցին վաղմիջնադարյան եզակի այն կառույցներից է, որտեղ համեմատաբար ամբողջականորեն է պահպանվել արտաքին ճեմասրահը, որի շնորհիվ մեծացել է եկեղեցու ընդհանուր ծավալը [1]:

Բազիլիկը կառուցված է բազալտի և բաց շագանակագույն ֆելզիտի սրբատաշ քարերով: Աչքի է ընկնում 6-7-րդ դդ. վաղքրիստոնեական արվեստին բնորոշ պատկերաքանդակների և զարդաքանդակների բազմազանությամբ, որոնք կիրառված են չափի բացառիկ զգացումով:

Եկեղեցու արտաքին և ներքին պատերին կան բազմաթիվ հայերեն արձանագրություններ: Եկեղեցին բազմիցս նորոգվել է, ինչի մասին հիշատակություններ են պահպանվել բակում գտնվող տապանաքարերի վրա (801թ., 1888թ.): 19-րդ դ. վերջերին թիֆլիսաբնակ Զաքարիա և Բաղդասար Աբովյան եղբայրներն իրենց նյութական միջոցներով վերանորոգել են եկեղեցին և շրջապարիսպը, ինչը վկայող արձանագրություններ կան եկեղեցու հյուսիսարևելյան գմբեթակիր մույթի արևմտյան կողմում ամրացված սալի և իրենց մոր՝ Եղիսաբեթի տապանաքարի վրա:

Մեթոդաբանություն

Եկեղեցու նախատիպերը հետազոտելու համար ուսումնասիրվել են նույն տարածաշրջանի թվով չորս 4-րդ դարին պատկանող միանավ եկեղեցիներ Կուրթան, Գտեվանք, Տորմակ, Զգրաշեն, (աղ. 1) ինչպես նաև 5-րդ և 6-րդ դարերին վերաբերող մեկական եկեղեցիներ՝ Արուճ և Եղվարդ (աղ. 2): Հետազոտություններն ամփոփ ձևով ներկայացված են աղյուսակների տեսքով: Առաջին և երկրորդ աղյուսակներում ուսումնասիրություն է կատարվել ըստ խորանների երկրաչափական ձևի, ավանդատան կցվածքի աշխարհագրական դիրքի, բաց արտաքին խորանի և սյունասրահի առկայության, կոնստրուկտիվ համակարգի՝ փայտածածկ կամ թաղածածկ, մուտքերի աշխարհագրական դիրքի, ծածկերի՝ միալանջ, երկլանջ կամ գմբեթ:

Երրորդ աղյուսակում ներկայացնում է կառուցվածքային այն մասերը, որոնք շարունակական են եղել և փոխանցվել հաջորդ դարերում հիմնադրված եկեղեցիներին (աղ. 3):

Կարևոր ենք համարում ներկայացնել նաև աղյուսակների տեքստային բովանդակությունը:

Աղյուսակ 1

4-րդ դարի եկեղեցիների վերլուծական աղյուսակ

IV ԴԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ՝ ԿՈՒՌԹԱՆԻ, ԳՏԵՎԱՆՔԻ, ՏՈՐՄԱԿԱԴՈՒՌԻ, ԶԳՐԱՇԵՆԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Աղյուսակ 1

IV ԴԱՐ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	ՃԱԿԱՏ	ԿՏՐՎԱԾՔ	ԼՈՒՍԱՆԿԱՐ	ԽՈՐԱՆ		ԵՌԱԼԱՏՈՒՆ			ԲԱՑ ԱՐՏԱՔԻՆ ԽՈՐԱՆ		ՍՅՈՒՆԱՍՐԱՀ		ԿՈՒԼՍՈՐՈՒԹՅՈՒՆ		ՄՈՒՏՔԵՐԻ ԴԻՐՔ					ԾԱԾԿԵՐ		
					Միալանջակ	Կամար	Գրանիտ	Պատով	Գրանիտ-Պատով	+	–	+	–	Միալանջակ	Մեկալանջակ	Արևելյան	Հյուսիսային	Արևմտյան	Հարավային	Երկլանջ	Գմբեթ
ԿՈՒՌԹԱՆ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ	ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ		+		+		+			+			+				+	
ԳՏԵՎԱՆՔ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ	ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ		+		+		+			+			+		+		+	
ՏՈՐՄԱԿԱԴՈՒՌ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ	ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ		+		+		+			+			+		+		+	
ԶԳՐԱՇԵՆ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	ՀԱՐԱՎԱՅԻՆ ՃԱԿԱՏ	ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ		+	+			+			+		+	+	+	+		+	
					100 %		75 %			100 %		100 %		75 %		100 % - 75 %			100 %		

Աղյուսակը բաժանված է յոթ ենթաբաժինների, առաջին բաժնի վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ բոլոր ուսումնասիրված եկեղեցիներում խորանը կիսաշրջանաձև է, երկրորդից՝ որ 3/4 ավանդատները կցված են հարավից, երրորդից՝ որ բոլոր եկեղեցիներն ունեն բաց արտաքին խորան, չորրորդից՝ որ բոլոր եկեղեցիներն առանց սյունասրահի են, հինգերորդից՝ որ միայն Զգրաշենի եկեղեցին է թաղածածկ, վեցերորդից՝ որ բոլոր եկեղեցիներն ունեն մուտք արևմուտքից, 1/4-ը՝ նաև հյուսիսից, 3/4-ը՝ նաև հարավից, յոթերրորդից՝ որ բոլոր եկեղեցիների ծածկերը երկլանջ են:

Աղյուսակ 2

5-6-րդ դարերի եկեղեցիների վերլուծական աղյուսակ

Աղյուսակ 2	**V-VI** ԴԱՐԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ՝ ԵՂՎԱՐԴԻ ԵՎ ԱՐՈՒՃԻ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ																				
V-VI ԴԱՐ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	ՃԱԿԱՏ	ԿՏՐՎԱԾՔ	ԼՈՒՍԱՆԿԱՐ	ԽՈՐԱՆ		ԱՎԱՆԴԱՏՈՒՆ			ԲԱՑ ԱՐՏԱՔԻՆ ԽՈՐԱՆ		ՍՅՈՒՆԱՍՐԱՀ		ԿԱՂԱՏՈՒՆԱԿԱՊԻՉ		ԱՐՈՒՃԻՆԵՐԻ ԴԻՐՔԻ			ԾԱԾԿԵՐ		
					Ուղղանկյուն	Կոր	Գրպանի	Գաբավ	Գրպանի-Գաբավ	+	-	+	-	Թաղածածկ	Քարածածկ	արևմուտք	հյուսիս	հարավ	երկլանջ	եռլանջ	հիպոթեզ
ԵՂՎԱՐԴ	ՀԱՏԱԿԱԳԻԾ	 ՀԱՐԿԱՎԱՅԻՆ ՃԱԿԱՏ	ԵՐԿԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ		+			+		+	+			+	+	+	+			
ԱՐՈՒՃ	 ՀԱՏԱԿԱԳԻԾ	ԱՐԵՎՄՏՅԱՆ ՃԱԿԱՏ	ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ	ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԱԿԱՏ		+			+		+		+		+	+	+	+			+
					100 %		100 %			100 %		50 %		100 %		100 %			50 %		

Բոլոր ուսումնասիրված եկեղեցիներում խորանը կիսաշրջանաձև է, բոլոր եկեղեցիներում առկա է ավանդատուն և՛ հյուսիսից, և՛ հարավից, բոլոր եկեղեցիներում առկա չէ բաց արտաքին խորան, սյունասրահ առկա է միայն Եղվարդի եկեղեցում, բոլոր եկեղեցիները թաղածածկ են, ունեն մուտքեր և՛ արևմուտքից, և՛ հյուսիսից, և՛ հարավից, և գմբեթ առկա է միայն Արուճի տաճարում:

Երրորդ աղյուսակում ներկայացվում են կառուցվածքային այն մասերը, որոնք շարունակական են եղել և փոխանցվել են հաջորդ դարերում հիմնադրված եկեղեցիներին:

Այսպիսով, 4-րդ դարի միանավ եկեղեցիների հետազոտության արդյունքում պարզվել է, որ

- Գտեվանքում առկա ավանդատունը նախատիպն է հետագա եկեղեցիների կառուցվածքում իր հաստատուն տեղը գտած ավանդատների համար,
- Զգրաշենում առաջին անգամ հանդիպում ենք արտաքին բաց խորանի, որն իր շարունակական զարգացումն է ապրել հետագա կառուցվածքներում,
- Տորմակ (Տորմակադուռ) եկեղեցին արտաքին ճեմասրահ ունեցող եկեղեցիների համար նախատիպ է հանդիսացել,
- Կուրթանը հաջորդ դարերին փոխանցել է կիսաշրջան խորանի ձևը:

5-րդ և 6-րդ դարերին վերաբերող հուշարձանների հետազոտությամբ պարզվել է, որ

- Արուճը հայկական եկեղեցաշինության մեջ ունի իր ուրույն տեղը, քանի որ հանդիսանում է գմբեթավոր բազիլիկայի նախատիպը,

- Եղվարդի եկեղեցում առկա սյունաշարն առաջիններից էր իր տիպի մեջ:

Աղյուսակ 3

6-րդ դարից հաջորդ դարեր փոխանցված ճարտարապետական կառուցվածքների վերլուծական աղյուսակ

ՀԱՋՈՐԴ ԴԱՐԵՐ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ	
ԿՈՐ ԽՈՐԱՆ	ԿՈՐ ԽՈՐԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ
	
ԱՎԱՆԴԱՏՈՒՆ	ԱՎԱՆԴԱՏԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐ
ԱՐՏԱՔԻՆ ՃԵՄԱՍՐԱՀ	ԱՐՏԱՔԻՆ ՃԵՄԱՍՐԱՀԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ
ԱՐՏԱՔԻՆ ԲԱՑ ԽՈՐԱՆ	ԱՐՏԱՔԻՆ ԲԱՑ ԽՈՐԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ
ԼԱՆՋԵՐ	ԼԱՆՋԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ
ՄՈՒՏՔԵՐ	ՄՈՒՏՔԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ
	

ՀԱՋՈՐԴ ԴԱՐԵՐ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ
ՍՅՈՒՆԱՇԱՐ
ՍՅՈՒՆԱՇԱՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ
ԳՄԲԵԹ

ԳՄԲԵԹԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ

Եզրակացություն

Օձունի եկեղեցին վաղմիջնադարյան այն կառույցն է, որտեղ մեկտեղված են դրան նախորդող՝ վերոթվարկյալ բոլոր եկեղեցիների հորինվածքային լուծումներն ու կառուցվածքային տարրերը և գալիս է հավաստելու կատարված գիտական եզրահանգումների ճշմարտացիությունը:

ПРОТОТИПЫ КОНСТРУКТИВНЫХ ЭЛЕМЕНТОВ ОДЗУНСКОЙ ЦЕРКВИ

Арман Жирайрович Торосян
Национальный университет Архитектуры и строительства Армении, "Ереванпроект" ЗАО, Ереван, РА
arman.m.torosyan@gmail.com

Обсуждаются принципы формообразования Одзунской церкви Сурб Аствацацин. Анализируются шесть церквей с 4-го по 6-й вв.: Гтеванк, Джграшен, Тормак, Куртан, Аруч и Егвард, которые являются ее прототипами. Их композиционные, структурные и декоративные решения имели важную роль в формообразовании армянских церквей. Определенные конструктивные элементы каждой из этих церквей были унаследованы в последующие века с сохранением их назначений, иногда, с некоторыми изменениями форм.

Ключевые слова: *придел, внешняя открытая апсида, внешняя открытая галерея, полукруглая апсида, купол, колоннада*

PROTOTYPES OF STRUCTURAL ELEMENTS OF THE ODZUN CHURCH

Arman Zhirayr Torosyan
National University of Architecture and Construction of Armenia, "Yerevanproject" CJSC, Yerevan, RA
arman.m.torosyan@gmail.com

The basics of Odzun Holy Mother of God Church layout is discussed. The following six churches of 4th - 6th centuries are analyzed: Gtevanq, Jgrashen, Tormak, Kurtan, Aruch and Yeghvard. The structure of the listed churches are very important for the original design of Armenian churches. Each of them has certain structural elements that have been transferred to the next centuries, preserving the essence of the structure, sometimes bearing some changings of the forms.

Keywords: *the chapel, opened external apse, opened exterior gallery, a semicircular apse, dome, colonnade*

Գրականություն

1. **Շախկյան Գ**. Օձունի եկեղեցին (Odzoun Church). - Երևան: «Սովետական գրող» հրատ., 1983.- 84 էջ:

References

1. Shakhkyan G. (1983), *Odzuni yekeghecin* [Odzun church]. Yerevan, "Soviet writer" publishing house, 84 p.

Թորոսյան Արման Ժիրայրի *(ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, ՃՏՊՃԺՎԳԱ և Պ ամբիոն, ասիստենտ, ասպիրանտ, «Երևաննախագիծ» ՓԲԸ, (+374) 41699939,* arman.m.torosyan@gmail.com
Торосян Арман Жирайрович *(РА, г.Ереван) - НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, ассистент, аспирант, "Ереванпроект" ЗАО, (+374) 41699939,* arman.m.torosyan@gmail.com
Torosyan Arman Zhirayr *(RA, Yerevan) - NUACA, chair of THARRHM & H, assistant, postgraduate student, "Yerevanproject" CJSC, (+374) 41699939,* arman.m.torosyan@gmail.com

Ներկայացվել է՝ 15.03.2018թ.
Ընդունվել է տպագրության՝ 19.03.2018թ.